№ 46 ԿԻՐԱԿԻ, 2 ՄԱՐՏԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 2 ՄԱՐՏԻ № 46

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուով տողատեղին առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1919 թ.

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ՆՈՐ, ՄԵԾԱՑՐԱԾ ԴԻՐՔՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիս . . . . 10 ռուբ.
3 » . . . . 25 »
Հատավաճառ . . . . 70 կոպ։

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 25.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 10—99.

Աննա Մելքոնեան Բուրակեանցը, Յարութիւն և Վարդան Մելքոնեան, Գայիանէ Մկրտչեան և Շողակաթ Առաքելեան Ջիլինգարեանները իրենց զաւակներով ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ իրենց անմոռանալի մօր, սիրելի սկեսրոջ և թանկագին մամի՝

ՄԱՀՏԵՍԻ ՀԵՂԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ

ՋԻԼԻՆԳԱՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև հիւանդութիւնից յետոյ, ուրբաթ, փետրուարի 28-ին, առաւօտեան ժամը 8-ին։ Եբեծքը շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, առաւօտ. ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Ծղնեթսկի փող. № 17), դէպի Ջիգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։ 2-2

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

Կիրակի օրը, ամսիս 2-ին, երեկոյեան ժամը 4 և կէսին ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ կը կայանայ հերթական դասախօսութիւն։ Խօսելու է

Տ. ՀԱԽՈՒՄԵԱՆԸ

Ծանօթ.—Կարող են ներկայ գտնուել նաև չէզոք անձինք։

1—1 Գործադիր Կոմիտէ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, մարտի 4-ին, երեկոյեան ժամը 4 և կէսին, նշանակուած է

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգ՝ 1) Ակումբի բանալու հարցը, 2) Սպահանջէսի հաշուետուութիւն, 3) Զեկուցում Կենտրոնական Կոմիտէի մասին, 4) Ընթացիկ հարցեր։

2—1 Գրեզկբիւմ

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մարտի 20-ին

Յօգուտ սովեալների և գաղթականների կազմակերպում է ԵՐԵԿՈՅԹ

„ՀԱՅԱՍՏԱՆ“

(ՍԻՄԻՈԼՆԵՐ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ)

Մանրամասնութիւնը՝ Գանովսկայա, № 3։ 1—1

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-Ի ՀԱՄԱՐ ՀՐԿԱՒՈՐ ԵՆ

I ՐԱԳԻՐԱՎ ԱԺԱՌՆԵՐ

Կիրակի, մարտի 2-ին, ցեր. ժ. 12-ին, Կ. Հ. Բ. Ընկ. գրադարանի դահլիճում նշանակուած է

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

անդամների

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգի խնդիրներն են.—1) Քննութիւն և հաստատութիւն Վարչութեան 1917 և 1918 թ. թ. գործունէութեան տեղեկագրի և դրամական հաշիւների՝ վերստ. յանձն. արձանագրութեան հետ միասին, 2) Ընկ. հիմնադիր և Վարչութեան փոխ-նախագահ Հ. Առաքելեանի յիշատակի յաւերժացման հարցը, 3) Որբանոցների հարցը, 4) Հայաստանի վերաշինութեան Յանձնաժողովի հետ միանալու հարցը և նոր միացեալ ընկերութեան կանոնադրութեան նախագծի քննութիւնը, 5) Ընտրութիւն գործադիր մարմնի.

Անդամներին առանձին հրաւէրներ չեն ուղարկուի։ 1—1

ԲԺԻՇԿ

ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բաժանմունքի։

ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլեկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։

Էլեկտրաբուժական կաբինետ

Ընդունելութիւնն ամեն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—49

ԲԺՇԿԱՊԵՏ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(Նախկին Դավոս սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, Թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Ռտիշչևսկայա 3, հեռ. 16—69։ տ. օ.) 100—48

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր ռենտգենեան և լոյսի ու էլեկտրօբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—59

ԳԻՒՂԱՑԻՆ ԿՈՐԱԾ Է

Գործեցէք, կամ լուռ մնացէք

Առանց աշխատանքի ապրել ուզողը չէր կարող իր հոգու ազնուութիւնը անարատ պահել. մեր գաւառական քաղաքներում, որ աշխատանքի հիմնարկութիւններ չըկար, որ քաղաքացին մէկը միւսից օգտուելով պիտի ապրէր, կամ քաղաքացին գիւղացուն շահագործելով պիտի ապրէր, սովորական դառաւ անհատական, դասակարգային դերը շահագործել... Հոգևորականը ինչքան ազատամիտ լինէր ծէսն և ազգին պիտի փառաբանէր, օտարի ազնիւը պիտի չտեսնէր... որ ծխականների տուած կամաւոր տուրքով ապրէր... իրաւաբանը մեղաւորին պիտի արդարացնէր, որ փող շատ ստանալով, իր ճոխ ապրուստին բաւականութիւն տար... բոլոր դատարանների մեծ ու փոքր պաշտօնեաները եթէ կաշառ վերցնելով հոգիներ չկորցնէին, կրկին չէին կարող շատ ծախսեր անել. չարչի-խանութպանները, որ մի քանի ձեռք անցած ապրանք էին վաճառում, եթէ չխաբէին, զեղծում չանէին, չէին կարող չոր քարից փողի աղբիւր հոսեցնել...

Նոյն եղանակով էին գործում ինտելիգենտ, գործակատար, արհեստաւոր, միկիտանչի, փողրադչի, ամեն տեսակ գործի մարդ. յանկարծ ժամանակի պահանջը ստիպեց բոլորին յեղափոխական լինել... Երբ պատերազմի սոսկալի փոթորիկը փողը շաղ տուեց ամեն տեղ հողի նման... բոլորը «երեսուն արծաթով» ծախեցին իրենց նոր հաւատը... բոլոր յեղափոխական ճառերի տառերն իսկ շահագործեցին... չգիտեմ բացառութիւն կազմող գաղափարամոլ կմը, որ փշոտ ճանապարհով խաչը ուսին Գողգոթա գնար...

Գիւղը շարունակ ենթակայ է լինում քաղաքին. ազդւում է թէ լաւից, և թէ վատից. քանի որ գիւղացու հողը բաւարարէր, քաղաքի հետ սերտ շփում չունէր, գութանը նրա գաղափարն էր. լեզուն՝ գութանի վաստակը. մաքուր էր նրա հոգին, մարդասէր էր զգացմունքը. շէն էր օջաղը, անարատ էր մասիլը...

Երբ պատաւոր, խանութպան յաճախ գիւղը մտան գիւղացուն շահագործելու համար, գիւղացին էլ վարակուեց փառասիրութեան, ծուլութեան, փող որսալու ախտով... տանուտէր լինելու համար կաշառ տուեց դատաւորին... հարևանը աւելի տուեց. երրորդը թէ աւելի տուեց, թէ գանգատի գրեց, թէ սուտ վկաներ վարձեց...

Խանութպանն էլ գիւղացուն մէկ էր տալիս, երեք էր պահանջում... գիւղացին իր պարտքն ստանում... Թշուառութեան սերմը սրտերի մէջն էր ցանւում... գիւղացուն դատաւորի տան էր լցնել տալիս... գիւղացուն անում էր գինետների, բանտերի հաստատակութիւն, ադվոկատների որսը...

Գիւղացին գիւղում խանութ էլ բաց արեց, քաղաքի փթած ապրանքը բերեց, ապառիկ տուեց, փոխարէնը ստացաւ կեղտոտ ցորեն, հոտած պանիր, կեղծած իւղ, քոսոտ այծ... կամ, «տալիք չեմ»...

Քաղաքացին զայրանում էր, երբ իր տուած կեղծ ապրանքի փոխարէն աւելի կեղծն էր ստանում... զայրանում էր, որ գիւղացին էլ սովորել է առևտուր, ու իր հացը հարամ անել է ուզում... գիւղացին իր այդ խորթ դերի մէջ, կարծես ինքն իրեն էլ ատելի էր երևում...

Վրայ հասաւ նրա համար աւելի սև օրը. արմատից պոկուած չոր չալուի նման, փախուստի փոթորկից քշուելով, հասաւ լցուաւ օտար երկիրների կեղտանոցները... սովից մեռնում է, դեռ իր կեանքը կրծող յոռնակութիւններից չի ազատւում...

Երբ նրա Մնացորդը վերադառնայ իր աւեր բոյնը. եթէ ապրի, ու այնտեղ տեսնի կրկին նոյն պայմանները, որ գիւղը թալանչիների շուկայ էին արել... որ գիւղացու մալն ու հողը, հոգին էլ էին ձեռքից խլել... Նրանց ապագան աւելի թշուառ կը լինի, քան անցեալն է եղել... Ինչ նոր իրաւակարգ պիտի լինի, որ գիւղացուն հոգով ու մարմնով մահանալուց փրկի. արդեօք չի՞ կարելի նրան շահագործողներին հողի աշխատանքով ապրելու պայմանի մէջ դնել... չի՞ կարելի քաղաքացի անունը գիւղացու սեփականութիւնն անել... գիւղը իրաւունք ունենայ մտնելու միայն հողի մասնագէտը... հողը լինի գիւղացու դասագիրքը... դասաւանդողը լինի աշխատանքի սիրահար գիւղատնտեսը. հողը մշակելու՝ գործնական գիտութիւնը... սակաւահող գիւղացուն նոր հողաբաժին տուողը... այն ժամանակ յուսալի է, որ գիւղացու հոգու բազմազան հիւանդութիւնների անդամահատութիւնը փրկարար հետևանք կունենայ, նրա հիւանդ հոգին առողջանալով, կրկին աշխատանքի սիրահար կը դառնայ. եթէ ոչ՝ գիւղացին կորած է. Նրա մասին միայն խօսել, գրել, քամու դեր կատարել է... գործեցէք, կամ լուռ մնացէք։

Մարտիրոս Ապանեան

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ՆՈՒԷՐԸ ԱՒՍՏՐԻԱՅԻՆ

Նորերս Վիէննա հասաւ երկու գնացք պարէնաւորման մթերքներով, որպէսին գեներալ Լորդ Կաւանը նուիրում է Աւստրիային՝ աւստրիացիների բրիտանական գերիների հետ աւելի լաւ վարուելու համար, քան թէ գերմանացիները։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՆՔՈՒՄԸ

Հիմք կայ կարծելու թէ խաղաղութեան պայմանագիրը կը ստորագրուի մայիս ամսուայ ընթացքում։

ԴԵՆԻԿԻՆԸ ԵՒ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԸ

Կամաւորական բանակի գլխաւոր հրամանատար Դենիկինի յանձնարարութեամբ գեներալ Լեախովը Հիւսիսային Կովկասի լեռնականների հանրապետութեան ժողովուրդների միութեանը ուլտիմատում է ներկայացրել, պահանջելով ազգաբնակութեան զօրահաւաք կատարել 18—45 տար. հասակի բոլշևիկների դէմ կռուելու համար։ Քննելով այդ ուլտիմատումը, լեռնականների հանրապետութիւնը վճռականօրէն մերժեց կատարել։

ԳԵՆԵՐԱԼ ԲԻՉԵՐԱԽՈՎ

Բաղւում ստացուած տեղեկութիւնների համաձայն, գեն. Բիչերախովը, որ նորերս Բագուից Բաթում էր հասել հանգստանալու, համաձայն Կամաւորական բանակի գլխաւոր հրամանատար գեն. Դենիկինի հրամանի, ամենակարճ ժամանակում վերադառնալու է Բագու։

ԳԵՆ. ԴԵՆԻԿԻՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Գեն. Դենիկինը հրատարակեց հետևեալ հրամանը.

Եկատերինոդար, № 148.

Որպէս նախատինք ռուս բանակութեան, շատ սպաներ, մինչև իսկ բարձր աստիճաններ, ծառայում են Կարմիր բանակի շարքերում։ Յայտարարում եմ, որ ոչ մի պատճառաբանութիւն չի կարող արդարացնել այդ վարմունքը։ Մահուան կռիւ մղելով բոլշևիկների դէմ, մենք կարենք չունենք պրովոկատորների։ Բոլորեքեանք որոնք անյապաղ չեն թողնի Կարմիր բանակի շարքերը՝ կարժանանան ժողովրդական անէծքի և կենթարկուեն ռուսաց բանակի դաշտային դատարանի ամենախիստ և անխնայ պատժի։

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՇԿԵՆՏՈՒՄ

Տաշկենտում բոլշևիկների դէմ անկարգութիւններ ծագեցին, որոնց հետևանքները դեռ ևս յայտնի չեն։

ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԱԳԾԵՐԸ

Արմաւիր-Տուապսէի ընկերութիւնը հետևեալ նոր երկաթուղագծերն է անցկացնում՝ Լաբինսկայա—Գսեբայսկ, Մայկոպ—Դախոչսկի և Բելորեչինսկ--Տիխորեցկ։

ՇԱՐՈՒՐԻՑ-ՆԱԽԻՋԵՒԱՆ

Հայոց հանրապետութեան տիրապետութիւնը չի անցնում Վոլչի Վարոտից։ Շարուր-Նախիջևանը գտնւում է անգլիական տիրապետութեան ներքոյ Լաուգէնի գլխաւորութեամբ։

ՕՐԴՈՒԲԱԴԻ ԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Օրդուբադում յայտարարուած է խանութիւն։ Այնտեղ անգլիացիներ չկան։

ԱԳՈՒԼԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Յայտարարուած է Ագուլիսի հանրապետութիւն։ (?) Հանրապետութեան գլուխ են անցած Հայկ Սոզոմոնեան և Մելիք-Մուսեան։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔԸ

Հաւասի գործակալութիւնը հաստատում է թէ ամերիկական միսիան հաւատացած է Վիլսոնի Իշխանաց կղզիների կոնֆերենցիայի բարեմիտ առաջարկութեան մասին։ Կոնֆե-

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 2 մարտի

ԱՆԹՈՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՐՄՈՒՆՔ

Հայ-վրացական տխուր միջադէպն արդէն անցել է պատմութեան գիրկը, երկու ժողովուրդներն էլ այժմ կարևոր և անհրաժեշտ են գտնում կրկին վերականգնել մօտիկ անցեալում խախտուած բարեկամական յարաբերութիւնները։ Արդէն հարց է բարձրացել լուրջ քննութիւն կատարել եղած-կատարուածը պարզաբանելու, երկու կողմերի մեղաւորներին պատասխանատուութեան կանչելու և խստիւ պատժի ենթարկելու համար։ Այդ հարցը, որն առաջարկել է մեզ անգլիական միսիան, փաստօրէն ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկու ժողովուրդների ամենաբուռն ու խոր պահանջի ձևական արտայայտութիւնը, և նրա քննութեան կարիքը մեր մէջ շատ աւելի առաջ էր զգացւում, քան անգլիացիների պաշտօնական ձևակերպումի օրից։

Եւ քանի որ հարցը այսպէս է դրուած, նա պէտք է կատարուի։ Մեղաւորները պիտի պատժուեն—ով էլ որ լինեն նրանք, ինչ աստիճանի վրայ էլ որ լինեն կանգնած։

Թէ հայ և թէ վրաց հասարակական միտքը տալիս է արդէն մի քանի անուններ, որոնց վրայ ծանրաբեռնում է այս տխուր եղելութեան մեղքը և հաշիւ է պահանջում նրանցից։ Եւ այն հանգամանքը, որ մինչև այսօր այդ անձնաւորութիւնները ոչ միայն բոլորովին ազատ են, այլ և վարում են քաղաքական և պետական պատասխանատու պաշտօններ, հոգեկան մեծ և խոր վրդովմունք է առաջ բերում երկու կողմերի այն շրջաններում, որոնք ի սրտէ ցանկանում են վերականգնել բարի դրացիական յարաբերութիւնները և ցոյց տալ մեղաւորներին և խռովարարներին իրենց արժանի տեղը։

Ի թիւս այդ յանցապարտների ժողովրդի առաջ երկու կողմերի վրդովուած հասարակական միտքը անուանում է և պ. Արշակ Ջամալեանին՝ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական տխրահռչակ ներկայացուցչին Վրաստանում, որին այժմ, ինչպէս լուրերը հաղորդում են, Հայաստանի կառավարութիւնը ուղարկում է Պոլիս՝ որպէս Հայաստանի ներկայացուցիչ Թիւրքիայում։

Մենք չենք ուզում այստեղ մտնել այն հարցի մանրամասն քննութեան մէջ, թէ արդեօք արդարացի են այդ մեղադրանքները թէ ոչ. մեզ համար պարզ է մի բան միայն. որ մի ժողովրդի շահերը իսկապէս պաշտպանած լինելու համար՝ հեռու պէտք է մնալ կուսակցամոլութեան նեղ սկզբունքին հետևելուց, մանաւանդ, երբ այդ սկզբունքով ղեկավարուողները կանգ են առնում ընտրութիւն կայացնելիս այնպիսի անձնաւորութիւնների վրայ, որոնք միանգամայն անհամապատասխան են իրենց վրայ առած գործի մեծութեանը և, որ գլխաւորն է, որոնց անուան և գործունէութեան հետ ժողովուրդը կապում է այնպիսի խոշոր ազգային կատաստրոֆաներ, ինչպիսին էր հայ-վրացական անմիտ արիւնհեղութիւնը։

Մենք դեռ ևս չգիտենք, թէ որքան արդարացի են այն մեղադրանքները, որոնք այսօր այնպէս յամառ կերպով բարդւում են պ. Ջամալեանի «դիւանագիտական» գործունէութեան վրայ. մենք չենք կարող այդ պատճառով և այդ առթիւ տալ մեր վերջնական խօսքը. մենք կը սպասենք գործի քննութեան։ Բայց մեզ թւում է, որ քանի եղելութիւնը դեռ չէ պարզուած, քանի հասարակական միտքը դեռ որոշ անձնաւորութեան գործունէութեան հետևանքների հետ է կապում ազգային դժբախտութեան առաջանալու տխուր ու ցաւալի փաստը՝ անթոյլատրելի և միանգամայն անհանդուրժելի է, որ այդ անձնաւորութիւնը ստանձնի մի նոր պատասխանատու պաշտօն մինչև գործի վերջնական քննութիւնը և պարզաբանումը և մինչև նրա վրայ բարդած մեղադրանքների անհիմն լինելն ապացուցանելը։

Անթոյլատրելի է մի պետութեան համար, որ նրա դիւանագիտական ներկայացուցիչը ուրիշ պետութեան մէջ լինի մի անձնաւորութիւն, որին, ի թիւս այլոց, ժողովրդի լայն շրջանները համարում են տեղի ունեցած կատաստրոֆայի սկզբնապատճառ և մեղաւոր։ Անթոյլատրելի է այդպիսի մի պատասխանատու գործ յանձնել նման անձնաւորութեան, մինչև եղելութեան և մեղադրանքների քննութիւնը, և անթոյլատրելի է այն հասարակ պատճառով, որ այդ փաստը վարկաբեկում է նախ այն կառավարութեանը, որը տալիս է նրան պատասխանատու լիազօրութիւններ և ապա վիրաւորանք է հասցնում այն ժողովրդի ազգային արժանապատուութեանը, որի ներկայացուցիչ է հանդիսանալու նա։

Եւ եթէ այդ ընտրութիւնը չի փոխուելու մինչև գործի քննութիւնը, եթէ նա տեղի է ունեցել դաշնակցականների կողմից լոկ այն պատճառով, որ այստեղ կուսակցականութիւնն է խոշոր դեր խաղացել, այն ժամանակ արդարացի է բացականչել Անդրկովկասի մի քաղաքական գործչի խօսքերով, որ՝ «դուք, դաշնակցականներդ, աւելի էք սիրում ձեր կուսակցութիւնը, քան հայ ժողովուրդը»։

րենցիա հրաւիրելու պատճառներից մէկն էլ կազմում է այն, որ Դաշնակիցների՝ Ռուսաստանին տուած մեծամեծ գումարները հնարաւոր լինի յետ ստանալ, որպիսին մերժում են բոլշևիկները։ Խորհրդածութեան գլխաւոր առարկաներից մէկն էլ կազմում է ռուսական պարտքի ճանաչումը։

ԳԵՆԵՐԱԼ ԲԱՐԱԹՈՎ

Թեհրանի կոզակները ուղարկում է գեներալ Բարաթովի մօտ մի դելեգացիա, որով խնդրում է նրան ընդունել Թեհրանի զօրքերի ատամանի պաշտօնը։

Խ. ՎԵՐՄԻՇԵԱՆԸ — ՊԱՐԵՆԱՒՈՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի կառավարութեան նախագահ Ալ. Խատիսեանից ստացուած է մի հեռագիր, որով յայտնում է, թէ փետրուարի 28-ին կառավարութիւնը պարենաւորման նախարարի պաշտօնի մէջ հաստատել է Հայ ժողովրդ. կուսակցութեան անդամ պ. Խ. Վերմիշեանին։

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Հայաստանի հանրապետութեան արդարադատութեան նախարար Ս. Յարութիւնեանը 27 փետր. Թիֆլիսից մեկնեց դէպի Երևան։

ԱՆԳԼԻԱՑԻՔ ՇՈՒՇՈՒՄ

Ամսիս 20-ին Շուշուց գրում են, որ երեք օր առաջ անգլիական 300 զօրք է մտել քաղաքը. քաղաքը զարդարուած է եղել անգլիական և ռուսական դրօշակներով, բոլոր քաղաքացիք խառը բազմութեամբ մուզիկայով և համքարական դրօշակներով ընդունել են զօրքին և տեղաւորել հայկական մասում, Արամեանցի՝ թեմական դպրոցին նուիրած տանը, որ առաջ լազարէթ է եղել. բոլոր զինուորներն հնդկացիներ են, իսկ մայորն ու սպաներն՝ անգլիացիք։ Մեծ ուրախութիւն է պատճառել քաղաքացիներին այս դէպքը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Խաղաղարար կոնֆերենցիայի չորեքշաբթի օրը հայոց պահանջների մասին տուած առաջարկութեան առթիւ, հայոց դելեգատներից մէկը՝ Ահարոնեան, հետևեալ յայտարարութիւնը տուեց «Թան» լրագրին.—«Հայոց Ազգային Խորհուրդը մայիսի 27-ին 1918 թ. յայտարարեց Հայաստանի անկախութիւնը։ Հրաւիրուեց հայոց պարլամենտ և կազմուեց կառավարութիւն, որին և Ազգային Խորհուրդը յանձնեց իր լիազօրութիւնը։ Հայոց հանրապետութիւնը ներկայումս բռնում է աւելի քան 60,000 քառ. կիլ. տերրիտորիա, նրա բնակչութեան թիւը հասնում է 2,000,000, իսկ զօրքի թիւը 30 մինչև 40 հազար։ Համաշխարհային պատերազմի ժամանակ հայերը առաջիններից մէկն էին, որոնք կռւում էին և որոնք մերժելով տաճկական առաջարկութիւնը՝ միացան Դաշնակիցների զօրքերին։

Մեծ հիասթափութիւն կը պատճառէր հայոց ազգին, եթէ նա հանուէր Խաղաղարար կոնֆերենցիայի ցուցակից։ Այդ պատճառով Հայոց կառավարութիւնը յանձնարարեց դելեգացիային, որի գլուխ կանգնած եմ ես, պահանջել ամենից առաջ՝ 1) հայոց հանրապետութեան ինքնուրոյնութեան ճանաչումը, որպիսին ձեռք է բերուել պատերազմի դաշտում. 2) հայոց ներկայացուցչի թոյլատուութիւնը Խաղաղարար կոնֆերենցիայում։ Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապէս մեր միացած ազգային պահանջներին, մենք պահանջում ենք Հայաստանի լիակատար ինքնուրոյնութիւն, որի մէջ պէտք է մտնի Հայաստանի հանրապետութիւնը և Տաճկաստանի հայոց նահանգները։ Այդպիսով կազմուած Հայոց պետութիւնը պէտք է գտնուի ժողովուրդների դաշնակցութեան հովանաւորութեան տակ և այդ դաշնակցութիւնից լիազօրուած մի որևէ պետութեան ժամանակաւոր պաշտպանութեան ներքոյ։ Որպէսզի ապագայ պետութիւնը լինի կենսունակ, անհրաժեշտ է նրան ճանապարհ ունենալ դէպի ծովը, առանց որի մեր ժողովուրդը չի կարող գոյութիւն ունենալ.

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Ինչպէս մեզ հաղորդում են, Աստրախանում և Կրասնովոդսկում բոլշևիկներից ձերբակալուած կանայք, պրոֆեսիոնալ միութիւնների կենտրոնական խորհրդի միջնորդութեան համաձայն, ըստ երևոյթին, շուտով ազատ կարձակուեն։

ԿԱԼՄԻԿՆԵՐԻ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Ստաւրոպոլում տեղեկութիւն է ստացուած, որ կալմիկների վայրերում երևան եկաւ բծաւոր տիֆ և եղջիւրաւոր կենդանիների ժանտախտ։

ԱԳՐԱՆՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Од. Л.»-ը փետրուարի 2-ից հաղորդում է.—Հայաստանի հանրապետութեան դեսպանութեան միջոցով պայմանաւորուած է ֆինանսիստների և վաճառականների հետ Հայաստան ուղարկելու 10 միլիոն արժէքի շաքար և ալիւր։ Միևնոյն ֆինանսիստներին իրաւունք է տրուած դրա փոխարէն Հայաստանից արտահանել բուրդ, բամբակ, կոնսերվներ և այլն։ Հայաստան ուղարկուող ապրանքների բեռնաւորումը կը սկսուի այս օրերս։

ԱԴՐԲԷՋԱՆԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ

Բաքւում Կ. Պոլսից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ Ադրբէջանի դելեգացիան անցաւ դէպի Պարիզ։

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հաղորդում ենք կամաւորական բանակի կառավարութեան նոր ցուցակը, որը կազմել է Հարաւ. Ռուսաստանի զինուած ուժերի գլխաւոր հրամանատարի [illegible] խորհրդածութիւնը.—նախագահ՝ կաւալերիայի գեներալ—Դրագոմիրով, գործերի կառավարիչ՝ սենատոր Ս. Վ. Բեզոբրազով (նաև խորհրդածութեան անդամ), կառավարչի օգնական՝ Լոդիժենսկի, բաժանմունքների կառավարիչներ՝ իրաւաբանութեան—Վ. Ն. Չելիշչև, ներքին գործերի՝ սենատոր—Ն. Ն. Չեբիշև, ֆինանսի՝ պրոֆեսոր Բերնացկի, առևտրի և արդիւնաբերութեան՝ Լեբեդև, ճանապարհների հաղորդակցութեան՝ Շուբերսկի, պետական վերահսկողութեան՝ Ստեպանով, դիւանագիտական՝ Սազոնով, նրա օգնական՝ Ներատով, զինուորական և ծովային՝ գեն. Լուկոմսկի, զինուորական հաղորդակցութեան՝ Գ. Լ. Սաննիկով, ժողովրդ. լուսաւորութեան՝ Նովգորոդցև և ագիտացիայի և պրոպագանդայի՝ Պարամոնով և առանց պորտֆելի Աստրով և Ֆեդորով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Սուզանաւերի վերացումը

Պարիզի կոնֆերենցիայում սուզանաւերի վերացման մասին յայտնած [illegible] առթիւ Ռէյտերի գործակալութիւնը հաւաստի աղբիւրներից տեղեկացել է, որ Բրիտանական ծովային վարչութիւնը համաձայնութիւն է տալիս այն ծրագրին, որ պատերազմի ընթացքում պէտք է արգելուին սուզանաւեր շինել և օգտուել նրանցով։ Այդ միջոցը, ի հարկէ, պէտք է ներկայացուի միջազգային կոնֆերենցիայի հաւանութեանը և ապահովուի խիստ երաշխաւորութեամբ։ Բրիտանական ծովային վարչութեան այդ հայեացքը ներկայումս ունի իր այն մեծ կշիռը, որ Մեծ Բրիտանիան ներկայումս աւելի լաւ կազմած մեծ քանակութեամբ սուզանաւեր ունի, քան թէ միւս երկիրները։

Մոսկուայի դրութիւնը

Ռուսական թերթերը հաղորդում են, թէ Մոսկուան բոլորովին աւերուել է բոլշևիկների ձեռքից։ Այդ քաղաքը աւելի է վնասուել քան Պետրոգրադը։ Խանութները փակ են, ցուցանակները հանուած, ոչ մի առևտուր չկայ, որովհետև վաճառականները փախել են։ Ունեոր դասակարգը, որը հնարաւորութիւն չէ ունեցել փախչելու, բանտարկուած է և իր պատժին է սպասում, որպիսին գործադրւում է ամեն օր։

Գերմանիայի զօրացրումը վերջացած

Ռէյտերի գործակալութեան հաղորդագրութիւնից երևում է, որ Գերմանիայի զօրացրումը համարեա վերջացած է, բացառութեամբ 100,000 մարդու, որոնք գտնւում են Արևելքում։ Կազմւում է կամաւոր բանակ 300,000 մարդուց բաղկացած, որը կազմուած է հնուց զինուորներից, սակայն կարգապահութիւնը թոյլ է, որովհետև զօրահաւաքը գնում է վատ և բանակի կազմը տակաւին լրիւ չէ։

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ՏԵՏՐԻՑ

ՓԱՓԱԳ-ՊԱՊԱԿ

Ա.

Մութ ու մրոտ առաստաղի տակ ապրեմ,
Շուրջս սիւներ, ժպլած պատեր անարուեստ,
Երթիկիս դէմ թոնիրս մխայ ծուլօրէն,
Խոր խոհերիս անվերադարձ տամ հրաժեշտ։

Արձակ բակումս եղնիկս փռուած որոճան,
Դէզի կողքին գամփռը նստի պահապան.
Փարախի մէջ կաթ ու կթոց խշխշան,
Տունս լցուի հազար բարիք, հազար բան։

Զանգակների ղօղանջի տակ իրիկուայ՝
Եկեղեցու ճամբան բռնեմ մտորուն—
Թող ինձ համար կեանքն հանդերձեալ ճիշտ թուայ,
Հոգուս հայեացքն ուղղուած լինի միշտ հեռուն։

Բ.

...Ու մենք, տրնով, մէջ տեղ առած քուրսի, սւին,
Ձեռք-ձեռքի կից քաշէինք մեղմ շուրջպարեր.
Դուրսը լինէր հողմ ու մրրիկ, ճերմակ ձիւն,
Նեղ երթիկից լուսինն անմեղ մեզ նայէր։

Գիշերն յուշիկ քարափներից իջնէր վար,

ԲԵՄ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ
Թատրա-երաժշտական գեղարուեստական թերթը խմբագրութեամբ
ԱՆՏ. ՄԱՅԻԼԵԱՆԻ
№ 8.
Լոյս է տեսնում կիրակի և հինգշաբթի օրերը

Թիֆլիս, 2 մարտի

ԿՈԼԼԵԿՏԻՒ ԹԱՏՐՈՆ

Կոլլեկտիւ թատրոնի գաղափարը վաղուց է որ գոյութիւն ունի արտասահմանում և մեր աչքի առաջ՝ Ռուսաստանում։ Սակայն այդ գեղեցիկ օրինակը արձագանգ չգտաւ մեր մէջ. պէտք է ստեղծել հայ բեմի գործիչների կորպորացիա, որը միանգամից կը բարձրացնէր թէ հայոց թատրոնը և թէ դերասանների հեղինակութիւնը։

Ոչ թէ այժմ, երբ քաղաքական դրութիւնը բաւական ծանր պայմաններ է ստեղծել հայ բեմի համար, այլև խաղաղ ժամանակ. պատերազմից առաջ էլ մեր բեմի լաւագոյն ոյժերը գործում էին ջլատուած, մեկուսացած, որը և առաջ էր բերում ոչ-ցանկալի տպաւորութիւն հասարակութեան մէջ։

Մէյնինհենեան դերասանական խումբը, որը ծնունդ առաւ Վագների օրերի ամենատաք ժամանակ՝ ահագին յաջողութիւն ունեցաւ։

Նրա նպատակն էր ի մի հաւաքել բոլոր լաւագոյն դերասանական ոյժերը և գեղարուեստական ամբողջութեամբ գերմանական բեմի վրայ ցուցադրել կլասիկ ռեպերտուար։

Ահա այս է, որ պիտի յիշեցնի հայ բեմի ղեկավարներին այն զոհողութիւնը, որ արին գերմանացի գեղարուեստները յանուն իսկական գեղարուեստի։ Ահա այդ բեմական գործիչների կորպորացիան է, որ դրամայի արժէքը բարձրացրեց։

Այն դերասանը, որ երէկ դուրս էր եկել առաջնակարգ դերերում, այսօր Մէյնինհենեան խմբում կատարում է մի աննշան երկրորդական դեր։ Մի դեր, որ մենք անուանում ենք «աննշան», «երկրորդական», իսկ նրանց համար դա ամբողջութեան անհրաժեշտ մասնիկն է, այնպէս, ինչպէս օրինակ Ռոզենկրանցը կամ Գիլդենշտեռնը ամբողջութիւն են կազմում Համլէտի համար, «փոքր» դերերն են, որ պիտի զօդուեն կենտրոնական դերին, նրանք են, որ աւելի մեծ փայլ պիտի տան դրամայի արժէքին և իր բարձրութեան վրայ պահեն բեմը։

Որպիսի՜ գեղեցիկ սկզբունք, որպիսի՜ մեծ վեհոգութիւն է դերասանի կողմից յանուն ընդհանուր գործի։

Այնտեղ չկան թագաւորում ոչ բանսարկութիւններ, ոչ պատենտային պրեմիերներ, ոչ ինքնասիրութեան ոտնահարում։

Այնտեղ գեղարուեստն է տիրապետողը։ Նա է ամենից իշխողը, նա է հաղթանակում միայն իր արբանեակներով ու անկեղծ երկրպագուներով։

Նոյնը չէ՞ միթէ Մոսկուայի Գեղարուեստական թատրոնը։ Միթէ «փոքր» ու «աննշան» դերակատարները ազատ գեղարուեստագէտներ են։ Միթէ նրանք ամբողջական ու կատարեալ դերասաններ չեն։

Իսկ մեզնում մի խմբում եթէ կան երկու ռեզոնիոր կամ երկու առաջին սիրահարների դերակատարներ, նրանք անկարող են հանդիպել առանց մի տխուր միջնադէպի։

Կոլլեկտիւ թատրոնի գաղափարը միայն կարող է փրկել մեր բեմը անկումից, նրա մէջ պէտք է որոնել մեր գեղարուեստի ազատութիւնը։

Մի ժամանակ դերասան Սևումեանը իր մի շարք յօդուածներում շօշափեց կոլլեկտիւ թատրոնի գաղափարը. այժմ էլ կրկնում ենք, որ մենք վերջ ի վերջոյ պիտի մօտենանք այդ խնդրին։

Հունգարիայի սահմանադիր ժողովի ընտրութիւնները

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 28 փետրուարի.— Նախարարների խորհուրդը որոշեց նշանակել Հունգարիայի սահմանադիր ժողովի ընտրութիւնները:

Գերմանացիների եւ լեհերի զինադադարը ստորագրած

ԿՐԱԿՈՎ, 18 փետրուարի.— Ստորագրուած է զինադադար լեհերի և գերմանացիների մէջ, որի հիման վրայ Գերմանիան պէտք է դադարեցնի իր պատերազմական գործողութիւնները լեհացիների դէմ: Գերմանական զօրքերին արգելուած է անցնել Պրուսիայի Նախկին Արեւելեան և Արեւմտեան սահմանները:

Դաշնակիցները հրաժարւում են ռուս ռազմագերիներին հայրենիք ուղարկել

ԲԵՐԼԻՆ, 23 փետր.— Բերլինի լրագիրները հաղորդում են, որ Գերմանիայի հետ կնքած զինադադարի պայմանի համաձայն, Դաշնակիցները յանձն առան հայրենիք ուղարկել ռուս ռազմագերիներին: Այժմ Դաշնակիցները հրաժարւում են կատարել այդ՝ պատճառաբանելով Ռուսաստանի անորոշ դրութիւնը և հաղորդակցութեան միջոցների բացակայութիւնը:

ՔՐՈՆԻԿՈՆ

Դատի յանձնուած սպաներ.— Զինուորական մինիստրը զեղծարարութեան համար պաշտօնանկ է արել և դատի յանձնել սպաներ՝ Կալանդիային, Բոնկիային և Ճանիբարային:

◆ **Ընդունելութիւն.**— Վրաց կառավարութեան նախագահը խնդրատուներին ընդունում է երեքշաբթի և հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 12-ից:

◆ **Երկաթուղու վրայ.**— Վրաստանի երկաթուղային վարչութեան պետը իրեն ենթակայ մարմիններին հրահանգել է, որ Հայաստանի և Վրաստանի երկաթուղային գործակալներին ցոյց տան հարկաւոր աջակցութիւն և քաղաքավարի վերաբերմունք:

◆ **Գրական-գեղարուեստական երեկոյթ.**— Երեքշաբթի, մարտի 4-ին, Արտիստական Ընկ. դահլիճում հայ ուսանողական կուլտուրական միութիւնը կազմակերպում է գրական-գեղարուեստական՝ երեկոյ Նուիրուած Յովհ. Թումանեանի ծննդեան 50-ամեակին: Երեկոյթին մասնակցելու են ոյժի ընկնող երաժիշտներ, դերասան-դերասանուհիներ և ուրիշներ: Լինելու է արեւելեան բաժին:

◆ **Ճանապարհների հաղորդ. մինիստրութեան կրճատումը.**— Վրաստանի ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կազմը կրճատւում է: Մնում է միմիայն ինժեներական խորհուրդը և տեխնիքական մարմինը: 49 ծառայողներից ընդամենը թողնում են 15 հոգի ծառայութեան մէջ: Հեռացուած ծառայողները ստանալու են լիկվիդացիոն:

◆ Մեր թերթի երէկուայ համարում (№ 45) քրոնիկոնի բաժնում տպուած է, որ իբր թէ այսօր, կիրակի, մարտի 2-ին, տեղի պիտի ունենայ Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերութեան ընդհանուր ժողով: Այդ լուրը թիւրիմացութեամբ է տպուել: Այդպիսի ժողով տեղի չի ունենալու:

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Ուրբաթ, փետր. 28-ին, երեկ. 7 ժ., 8—10 զինուածներ մտնում են Բենիկ վարդապետի բնակարանը (Пастеровская, 8), որին կից անգլիական զօրանոցն է, Ադոլֆ Թատրոնի հանդէպ: Ատրճանակներով սաստիկ ծեծում են Բենիկ վարդապետին, Նրա մօտ գտնուող Վերայի գերեզմանատան եկեղեցու քահանան, թեկնածու սարկաւագ Կարապետին և երկու ուրիշ պարոնների, ինչպէս և իր ազգական տիկնոջ ու Նրա պատանի զաւակին: Վիրաւորում են Բենիկ վարդապետի գլուխը ատրճանակների հարուածով, կոկորդը խեղդում, ինչպէս և ծեծում Ներկայ եղողներին: Հաւաքում տանում են Բենիկ վարդապետի ականակուռ ոսկէ խաչը, ոսկէ դաւաղանը, ոսկէ ժամացոյցները, առձեռն 550 ռ. նոր ստացած գիմնազիայից ռոճիկը: Տանում են բնակարանում եղած արծաթեղէն շաքարաման, կաթնաման, գդալներ և այլն և այլն, ինչպէս կարպետներ զգեստներ: Թալանում են և հիւրերին, առնելով Նրանց գրպանում եղած չեղած դրամները, ժամացոյցները իսկ սարկաւագից և եկեղեցու խաչը:

Այժմ Բենիկ վարդապետը ուժասպառ, արտնեղուած, հիւանդ պառկած է, զուրկ ամեն միջոցներից: Անհրաժեշտ է նիւթական անյապաղ օգնութիւն և անպայման պէտք է Նրան տեղափոխել այդ բնակարանից:

Տ. Նազարեան

ԲԱԳՈՒ

Պարենաւորման կոմիսար

Անգլիա ուղարկուած կապիտան Ինսենդի փոխարէն պարենաւորման բրիտանական կոմիսար է նշանակուած մայոր Ֆինգը:

Առու, ճամբայ խաւարի մէջ
սուզուէին,
Լոյս ու ճրագ տնակներում չերևար,
Մռայլուսմի նինջը փարէր աշխարհին:

…Ու մենք, տընով, մէջ տեղ առած
քուրսի, սիւն,
Պար քաշէինք…դուրսը լինէր
ձերմակ ձիւն…

Պանարէ

ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻ XX ԱՄԵԱԿԸ

Այսպիսի աննպաստ պայմաններում, երբ մենք թևակոխեցինք 19 9 թիւը, լրացաւ մեր ժողովրդական թատրոնի եռանդուն և տաղանդաւոր արտիստ-ռեժիսեօր պ. Ամօ-Խարազեանի բեմական գործունէութեան XX ամեակը… Յարգելի յոբելեարը (ըստ հայ պարբերականների տուած կենսագրականների) հայ թատրոնի դերասան է կոչուել ճիշտ 1898 թուին, իսկ մինչ այդ նա հանդիսացել է իբրև հայ բեմի ընդունակ սիրող: Տակաւին անբասիր պատանի, անգամ աշակերտական նստարանից փոքրիկ Համոյի անհանգիստ ոգու մէջ հետզհետէ ուժգնօրէն արթնանում է մոլեգին սէր դէպի մայրենի բեմը, և իր այդ անկեղծ տենչանքով տարւում հայրենի թատրոնի հետ, որ այն ժամանակ սոսկալի յանցանք էր նկատւում: Ոգևորուած Համոյին յաջողւում է իրենց տան բակում բեմ սարքել և իր հնարած փոքրիկ պիէսներով իր ընկերների և հարեւանների աջակցութեամբ աշակերտական Ներկայացումներ կազմակերպել:

Երիտասարդ Համմոն, Ներսիսեան Հ. Դպրոցում միջնակարգ կրթութիւնը ստանալուց յետոյ եռանդուն մասնակցութիւն է ցոյց տալիս հանգուցեալ Մանդինեանի կազմակերպած Ներկայացումներին և իր աչքի զարնող բեմական ընդունակութեամբ գրաւում է բոլորի ուշադրութիւնը: Անցնում է որոշ ժամանակ, և բեմական արուեստը առաւել ևս իր մէջ զարգացնելու և խորացնելու նկատառմամբ ուղևորւում է Մոսկուա ուսուցչապետ Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի մօտ առնելու հոգեբանութեան դասեր. այստեղ նա սովորում է և ռեժիսուրան: Շնորհիւ աշակերտի բնածին ընդունակութեան, պրոֆեսորը Համոյի վրայ ուրոյն ուշադրութիւն է դարձնում: Ամօ-Խարազեանը հին Մոսկուայում թանգարաններ է յաճախում, ուշի-ուշով ուսումնասիրում է պէս-պէս տարազները, ռեժիսեօրների, թատերական նկարիչների հետ և իր արուեստին զարկ տալու համար, անում է ինչ որ հնարաւոր է: Բայց միայն սրանով չբաւականանալով իր բուն նպատակին հասնելու համար՝ նա գնում է Պարիզ: Պարիզում նա նոյնպէս բեմական մարմնամարզութեամբ և ուսումնասիրութեամբ է զբաղւում մօտիկ կապ հաստատելով տեղական մի քանի թատերական գործիչների հետ, մանաւանդ աշխարհահռչակ Մունէ-Սիւլլիի հետ: Ամօ-Խարազեան հայկական գաղութի լայն աջակցութեամբ Ներկայացումներ է տալիս, յաջողութեամբ խաղալով Մաւրի, Համլէթի և Ուրիէլի դերերը և ձեռք բերելով ի հարկ է գաղութի և Ներկայ գտնուող օտարների համակրանքը և մամուլի արձագանքը:

Գալով Թիֆլիս, ինտելիգենտ և բեմական ընդունակութիւններով օժտուած երիտասարդներից կազմակերպում է «Նոր Դրամա» անունով մի խումբ և Ներկայացումներ տալու համար ուրիշների պէս չի շտապում Արքունական, Արտիստական թատրոնները, այլ շտապում է ժողովրդի հոծ խաւերը, որտեղ պարփակուած են աշխատաւորներ, բանուորներ — Հալաբարի համեստ թատրոնը. միշտ նախ քան վարագոյրը բացուելը ինքը բեմից անձամբ վերծանում էր հասկանալի լեզուով բեմադրուելիք պիեսայի սիւժէն: Ամօ-Խարազեանը շարունակ ջանացել է հայ ժողովրդական թատրոնի կազմող գործը բարեյաջող և հաստատ հիմունքների վրայ դնել և պէտք է ասել, որ ժամանակի ընթացքում այդ շինարարական շաւիղով գործելով, մեծապէս Նպաստել է հայ թատրոնի հիմքերի ամրապնդման և բարելաւման: Սակայն պէտք է նկատել և այն, որ արդի հայ բեմի առաջնակարգ ոյժերից մի քանիսը պարտական են և շինարար Համոյին, որովհետև մասամբ Նրա կաղապարի արդիւնքն են: Յոբելեարը անմիջապէս և գերազանցօրէն աչքի է ընկնում հետևեալ պիեսներում. «Օթելլօ», «Ուրիէլ», «Սենեգալի» (Տրիլբի), «Հայր», «Բալ Մասկարադ» (Արբենին), «Քին», «Արիւն» (Իգնաշա) և այլն…

Բայց առանձին հոգեկան յաճոյքով ենք դիտում Նրա [illegible] և ինքնահաւան արիստոկրատ Պետրոնիոսը «Ցմ երթաս» մէջ և պէտք է ասել, որ Նրան մեծապէս յաջողւում է ցուցադրել այդ վեհ-[illegible] ճաշակագէտի դերը: Գալով Նրա հասարակական գործերին, պէտք է ասել, որ մինչև օրս էլ նա չի դադարել մասնակցելուց իր աշխատութիւններով այս կամ այն պարբերականներին: Այս էլ յիշենք, որ յոբելեարը մի քանի տարի առաջ հայ թատրոնի կողմից ընտրուել էր պատգամաւոր՝ մասնակցելու համար Մոսկուայում տեղի ունեցած թատրոնական գործիչների համագումարին. Ջերմ ընդունելութիւն էին ցոյց տուել Նրան իբրև Կովկասից միակ Ներկայացուցչի (այստեղից միայն հայերն ունէին պատուիրակ) և իր ժամանակ արտասանած ճառը համագումարում լրիւ տպուած է «Русск. Вѣд.» լրագրում: Թիֆլիս գալով յարգելի յոբելեարը համագումարի մասին յաջորդական շահեկան յօդուածներ՝ զետեղեց «Մշակ»ում:

Այսպիսով ուրեմն հայ իրականութեան մէջ Ամօ-Խարազեանը եղել է շարունակ նախաձեռնող և շինարար ոյժ: Ներկայումս էլ սիրով Ամօ-Խարազեանը ղեկավար է և ռեժիսեօր Թիֆլիսի հայ ուսանողա-աշակերտական դրամատիկ ընկերութեան մէջ, որի ջանքերով ուրեմն և ստուգիւ. այս յատկութիւնների շնորհիւ է, որ յարգելի արտիստը վայելում է հայ երիտասարդութեան սէրը ու համակրանքը: Սրտանց ողջունում ենք քրտնաջան և բազմաչարչար Ամօ-Խարազեանի XX ամեակը և բարեմաղթում ենք շուտով տօնելու Նրա XV ամեակը:

Վ. Ս.

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՊԱՅԹՈՒՄԻ ԱՌԹԻՒ

Դատախազ պ. Ա. Մալխասեանի նախագահութեամբ յատուկ յանձնաժողովի կատարած քննութիւնից պարզուել է, որ բացի կայարանի և Նրա շրջակայքի մի շարք պետական տներից, քանդուել են հիմնովին մօտ 60 մասնաւոր տներ և խանութներ:

Վնասուած զոհերի թիւը մինչև օրս չի որոշուել, որովհետև այդ շրջանում պայթումի ժամանակ իջած են եղել շատ գաղթականներ անյայտ տեղերից. բոլորն էլ ջարդուել էին և թաղուել փլատակների տակ. դիակների մի մասը մինչև օրս էլ չեն գտնուած սարերի պէս կուտակուած հողակոյտերի տակից: Առայժմ սպանուածների թիւը մօտ 300 է, որոնց դիակները գտնուած են, իսկ վիրաւորուածներինը՝ 500 հոգի:

Վնասների գումարը դեռ չի որոշուած, բայց ենթադրում են 10—15 միլիոն: Չարագործութիւն է եղել, թէ անզգուշութիւն պայթումի պատճառը—յայտնի չէ, բայց մի բան, որ քննութեամբ արդէն հաստատուած է, այդ այն է, որ տեղական զինուորական իշխանութիւնը թոյլ է տուել իրեն յանցաւոր անհոգութիւն: Կայարանի մօտի շինութիւնների մէջ և պլատֆորմի վրայ տաճիկները Ալէքսանդրապոլից հեռանալիս թողել են ահագին քանակութեամբ վառօդ, փամփուշտներ և պայթուցիկ իրեր:

Տաճիկները հեռացել են դեկտեմբերի 4-ին, իսկ պայթումը տեղի ունեցաւ դեկտեմ. 28-ին: Այդ երկար ժամանակամիջոցում տեղական զինուորական իշխանութիւնը հազարաւոր փութ վառօդից ու դինամիտից տեղափոխել էր ընդամենը 80 փութ: Եւ ահա՝ շնորհիւ զինուորական պատասխանատու պաշտօնեաների քանդուեց քաղաքի մի կարևոր մասը, փչացուեցին քաղաքի և ուրիշ շատ տներ, զոհ գնացին հազարից աւելի անմեղ մարդիկ:

Արդարութիւնը պահանջում է ամենախիստ պատիժը այն պաշտօնեաների, որոնց յանցաւոր անհոգութիւնը եղաւ պատճառը աղէտի:

Քննութիւնից, ինչպէս տեղեկացել ենք, պատասխանատուութեան են ենթարկւում իբր մեղադրեալներ հետևեալ անձինք:

Արտիլերիայի գնդապետ Կոլուբանսկի, որը ուղարկուած էր ընդունելու տաճիկներից զօրանոցների և զինուորական ամեն տեսակի կայքը, ի միջի այլոց Նրա պարտականութիւնն է եղել կայարանից տեղափոխելու վառօդ և դինամիտ քաղաքից դուրս շինութիւնները:

2. Կոլուբանսկու անմիջական իշխանաւոր գեներալ Ղամազով:

3. Բերդի կոմենդանտ գնդապետ Կորգանով:

4. Կայարանի կոմենդանտ կապիտան Տէր-Յարութիւնեանց:

Գնդապետ Կորգանովին մեղադրում են նաև մի ուրիշ զազրելի գործում. Նրա հրամանով սպանուածներից մօտ 30 դիակ տարած են լինում զօրանոց. նա մոռանում է յանձնելու որ թաղեն: Այդ բանի մասին յիշում են միայն յունուարի 9-ին, և երբ գալիս են դիակները տանելու, գտնում են միայն ոսկորներ. սոված շները մտնում են բաց զօրանոցը և ուտում են մեռելների միսը:

ԱՏՆԻՄՏԱՆԱՑ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Դ. Նիստ 10 փետրուարի)

Օրակարգն է՝

1) Ընթացիկ գործեր,

2) Ներգաղթի յանձնաժողովի առաջին զեկուցումը.

3) Քաղաքական յանձնաժողովի առաջին զեկուցումը:

Նախագահում է Վր. Տէրոյեան:

Նախագահը կարդում է Նախորդ նիստում հաշուեյարդար յանձնաժողովի զեկուցման առթիւ ստացուած բանաձևերի մշակուած ձևը: Ժողովը գտնելով որ այդ բանաձևը չի համապատասխանում պատգամաւորների Նախորդ նիստում ցոյց տուած տրամադրութիւններին և առաջարկներին, որոշում է դատ դատ քուէարկել բանաձևերը: Անցնում է խմբագրական յանձնաժողովի բանաձևը:

Ապա Նախագահը կարդում է եզիդիների պետ Ջհանկիրից համագումարի առթիւ ստացուած շնորհաւորական և ողջոյնի գրութիւնը, որը ընդունւում է ծափահարութեամբ: Կարդում է նոյնպէս Անդրանիկից ուղարկուած նամակը:

Արմէն Սասունին զեկուցում է ներգաղթի յանձնաժողովի [illegible] առաջին մասը:

Յանձնաժողովը ի նկատի ունենալով ներգաղթի մօտալուտ լինելը, անհրաժեշտ է գտել հետևեալ երեք հանգամանքները.

1) Ապահովութեան, 2) պարենաւորման և 3) վերաշինութեան: Յանձնաժողովը գտնում է, որ գաղթականների վերադարձման համար կարևոր է ապահովութեան խնդիրը, որի համար հարկաւոր է կազմակերպել ժողովրդական միլիցիա կամ զօրք և զինել Դաշնակիցներին ու Պարիզի կոնֆերանսին: Ներգաղթին պէտք է մասնակցեն մօտաւորապէս 300,000 հոգի, որոնց պարենաւորման տեսակէտից անհրաժեշտ է ապահովել երեք ամսով: Սկզբեան անհրաժեշտ է գտնում Ներգաղթող ժողովրդի համար բանալ սննդատու կայաններ: Պարենաւորման խնդրի հետ կապուած է բժշկա-սանիտարական գործը, որը պէտք է լաւ հիմքերի վրայ դրուի, խուսափելու համար համաճարակներից և վարակիչ հիւանդութիւններից:

Այս խնդրի շուրջը խօսում են մի շարք պատգամաւորներ, որոնց պատասխանում է զեկուցանողը:

Բժ. Բոնապարտեան — տալիս է քաղաքական յանձնաժողովի առաջին զեկուցումը. մանրամասն կանգ է առնում 1917 թ. քաղաքական անցուդարձի վրայ, ռուսական յեղափոխութիւնից յետոյ և յատկապէս տաճկա-հայերի մասնակցութեան և գործունէութեան վրայ: Ապա յայտնում է, որ յանձնաժողովին զբաղեցրել են հետևեալ խնդիրները. 1) Միացեալ Հայաստանի գաղափարի յայտարարութիւնը: 2) Նուբար փաշայի կառավարութեան ճանաչումը և վստահութիւնը: 3) Ընկալ, Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը և օրիէնտացիան: 4) Մեր դիրքը դէպի Հայաստանի հանրապետութեան պարլամենտը և կառավարութիւնը: 5) Միացեալ Հայաստանի վերաբերմունքը դէպի Հայաստանից դուրս գտնուած հայութիւնը: 6) Մեր վերաբերմունքը դէպի տաճիկ կառավարութիւնը.—

Յանձնաժողովը [illegible]նել է Միացեալ Հայաստանի գաղափարի յայտարարութիւնը և միաձայն իր վստահութեան քուէն է տուել Պօղոս Նուբար փաշայի կազմած կառավարութեանը: Յանձնաժողովի մէջ երկու կարծիք է եղել չորրորդ խնդրի վերաբերեալ. մեր դիրքը դէպի Հայաստանի պարլամենտը և կառավարութիւնը: Մի մասը գտել է, որ պէտք է մի պատմական ակտ կատարել, յայտարարելով Միացեալ Հայաստանի անկախութիւնը և նոյնիսկ պատգամաւորներ ուղարկել պարլամենտ:

Միւս մասի կարծիքն է, որ ինչպէս տաճկա-հայերը մինչ այժմ չեն ցանկացել այս կամ այն պետութեան քաղաքացիները լինելու, այժմ էլ չեն կարող լինել և մտնելով պարլամենտ, պէտք է դառնան Արարատեան հանրապետութեան քաղաքացիներ, որով և կը մեռնի տաճկահայ դատը:

Վերջին կէտի վերաբերեալ բոլոր պատգամաւորները վճռել են հրապարակաւ դատապարտութեան կանչելու հայկական ջարդերի բոլոր ոճրագործներին:

Վիճաբանութիւնները յետաձգւում է միւս նիստին:

Նիստը փակւում է:

ՎՐԱՍՏԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

(Հայաստանի Հանրապ. պատուիրակութեան Նախագահ Մ. Յարութիւնեանի հաղորդածը)

Հայ-վրացական կոնֆերանսի միջոցին նախագահ գնդապետ Սախարտ որոշել էր, որ մի շարք տնտեսական խնդիրներ և գործնական նշանակութիւն ունեցող հարցեր առաջարկուած էին հայ պատուիրակութեան կողմից և նախագահի որոշմամբ հանուել էր կոնֆերանսի օրակարգից և պէտք է քննութեան առնուէին Հայաստանի և Վրաստանի կառավարութեան Ներկայացուցիչների կողմից և միայն անհամաձայնութեան դէպքում պիտի լուծուէին Դաշնակից հրամանատարութեան վճռով:

Չնայած, որ կոնֆերանսի պարապմունքները վաղուց վերջացել են և ստորագրուել, բայց և այնպէս հայկական պատուիրակութիւնը չէր կարող այստեղից մեկնել առանց լուծելու այն խնդիրները, որոնք ներկայումս կենսական նշանակութիւն ունեն Հայաստանի Հանրապետութեան համար: Չնայած, որ Վրաստանի կառավարութիւնը սկզբունքով էլ համաձայնութիւն էր տուել զբաղուել այդ խնդիրների քննութեամբ բայց և այնպէս նա ժամանակ չէր ունենում նիստ հրաւիրել և այդ երկար ժամանակամիջոցում տեղի է ունենում միայն երկու կողմից նշանակուած մասնագէտների յանձնաժողովի նիստերը՝ երկաթուղային պայմանագրի տեխնիքական մանրամասնութիւնները մշակելու համար: Իր բազմաթիւ դիմումներին խնդիրները շտապեցնելու համար, հայկական պատուիրակութիւնը շարունակ լսում էր սկզբունքային համաձայնութիւն, բայց ինչ-ինչ պատճառներով նիստեր չէին կայանում:

Ներկայումս արդէն սկսուած են հայկական պատուիրակութեան և վրաց կառավարութեան Ներկայացուցիչների նիստերը, որոնք ընթանում են համերաշխ և բարեկամական մթնոլորտում: Առաջին նիստը տեղի ունեցաւ փետրուարի 28-ին: Քննութեան են դրուած բացի մի շարք քաղաքական նշանակութիւն ունեցող խնդիրներից, նաև տնտեսական և գործնական հարցեր, որոնք նպատակ ունեն կանոնաւորելու և նորմալ դարձնելու յարաբերութիւնները և հաղորդակցութիւնը երկու հանրապետութիւնների միջև: Վերաբերւում է հայկական միսիան, իր ամբողջ իրաւունքով. առայժմ Միք. Թումանեանի գլխաւորութեամբ մինչև Հայաստանի դիւանագիտական Ներկայացուցչի նշանակումը: Սկզբունքով ընդունուած է ազատ տրանզիտ ամեն տեսակ ապրանքների թէ Պարսկաստանից՝ Հայաստանի տերիտորիայի վրայով դէպի Վրաստան և թէ Ռուսաստանից ու Արտասահմանից Վրաստանի տերիտորիայի վրայով դէպի Հայաստան: Վերացւելու են ամեն տեսակի թոյլտուութիւնները (пропускъ) ճանապարհորդների համար և երկաթուղային հաղորդակցութիւնը կը լինի ազատ, միայն իւրաքանչիւր ճանապարհորդ իր կառավարութիւնից կունենայ ինքնութիւնը հաստատող թուղթ (удостовѣреніе личности): Մարտի 1-ից գործադրութեան մէջ է մտել փոստ-հեռագրական կոնվենցիան Հայաստանի և Վրաստանի միջև: Քննութեան առարկայ է հանդիսանում նաև հայ-վրացական կոնֆլիկտի ժամանակ Թիֆլիսի բանկերից գրաւած Հայաստանի Հանրապետութեան պատկանող 13 միլիոն 600 հազար ռ. և հայկական կորպուսին պատկանող գոյքի վերադարձնելու խնդիրը: Դադարկելու է վրաց կառավարութեան պատժողական միջոցները այն հայկական գիւղերի նկատմամբ, որոնք իբր ապստամբներ են եղել Վրաստանի դէմ: Հարց է դրուած նաև, որ Հայաստանը առատ օգտուելու իրաւունք ունենայ այն հաստատութիւններից, որոնք ընդհանուր պետական էին և այժմ մնացել են Վրաստանի սահմաններում:

Երկաթուղային հաղորդակցութեան վերաբերմամբ վերջնական համաձայնութեան գալուց առաջ, երկու կողմերն էլ հարկադրուած են հաշուի առնել Անգլիայի առաջարկը, որով ծրագրւում է մի ընդհանուր ղեկավարութիւն ամբողջ Անդրկովկ. երկաթուղու վրայ, մի միջնակատական բիւրոյի ձեռքով, որի մէջ մտնելու են երկուական Ներկայացուցիչներ Հայաստանից, Վրաստանից և Ադրբէջանից՝ արտակարգ իրաւունքներ ունեցող նախագահով:

Վրաց կառավարութեան առաջարկին չորս հանրապետութիւնների կոնֆերանս հրաւիրելու մասին, Հայաստանի կառավարութիւնը տուել է իր համաձայնութիւնը:

Խորհրդաժողովի յաջորդ նիստը կայանալու է վաղը:

ԱՐԴԵՕՔ ԱՅՍ ՀԱ՞Ց Է

Ներկայացնելով «Ժողովուրդ»ի խմբագրութեան Գաղթականական մարմնի փախստականներին բաժանուող հացը՝ չեմ կարող հաւատալ որ դա հաց է, թէ որևիցէ նիւթից շաղախուած մի անհասկանալի զզուանք առարկայ. բացի հացից ամեն բանի նմանութիւն ունի: Հացը երբէք տալիս են փախստականներին ապրեցնելու համար, երբէք տալիս են որպէս մահուան, երբէք տալիս են սովամահութիւնից ազատելու համար—ուրեմն պէտք է տալ փոքր ի շատէ կարգին հաց, և ոչ թէ ցեխ կամ թոյն: Սա հաց չէ, սա սնունդ չէ, սրանով թունաւորում են առանց այն էլ մաշուած, հիւծուած, ոսկոր ու մորթ դառած փախստականներին: Թող փորձէ հաց բաժանողը. եթէ ինքը կարող է ուտել, այն ժամանակ գաղթականն էլ կարող է ուտել: Եթէ այս հացը տալիս են մեռցնելու համար, ոչինչ չունեմ ասելու. իսկ եթէ տալիս են ապրեցնելու համար՝ դա արդարութիւն չէ: Հաց տուէք, պարոններ, և ոչ ցեխ:

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

ԿՈՉ ԹԻՖԼԻՍԱԲՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐՈՒՆ

Հայրենակիցներ.

Այն ժամանակ, երբ համաշխարհային պատերազմը իր վախճանին կը մօտենար, այն ատեն, երբ կործանարար պատերազմի արհաւիրքներէն յոգնած, հիւծուած մարդկութիւնը իր նորածագ արշալոյսին կսպասէր, այն պահուն, երբ պատերազմի չարաբախտ նոխազ հայ ժողովուրդը իր տարագրուած բեկորները մայր հայրենիքում տեղաւորել կը յուսար — ահա այդ ժամանակ վրայ կը հասնի աւելի ահռելի, աւելի աղէտաւոր թշնամին սովը ու համաճարակը: Ամէն կողմէ սովի ճիչեր կը լսուին, ամէն անկիւնէն հաց, հաց կը կանչեն, ամէն խցէն գորովագութ մօր ողբը կը հասնի սիրասուն զաւկին սովի ճիրաններէն ազատելու համար: Սակայն թշնամին անողոք է, նա շատ է ուժեղ և կը հնձէ աջ ու ձախ:

Հայրենակիցներ, թէև աղէտը մեծ է, բայց և այնպէս չպէտք է յուսահատուել, հարկաւոր է շարժուել, ձեռները ծալել յանցանք է, ականջներ փակել՝ ոճիր. պէտք է հաւաքել ուժերը, անել ինչ որ հնարաւոր է, զոհաբերել ով ինչքան կարող է, աճապարել քանի ուշ չէ: Երբ հեռաւոր բարեկամները մեր կանչերուն ի լուր՝ օգնութեան կը փութան, պէտք է մեր սրտերը բաբախեն աւելի արագ և երակները դառնան աւելի խռովայոյզ: Անոնք մեր սիրելիներն են, որ կընկնին ամէն րոպէ, անոնք ապագայ հայ ազատ կեանքի սիւներն են, որ փուլ կուգան մի առ մի, այնտեղ մեր վաղուայ սերունդի աստղերն են որ կը մարին: Մի անգամ ընդմիշտ պէտք է իմանանք, որ իրաւունք չունենք օտարներէն խնդրելու, որ իրաւունք չունենք աւելին սպասելու, երբ մենք չենք տուած մեր կրցածը, երբ մենք չենք զոհաբերած մեր բէնը: Գուցէ սա կըլլնի հայ ժողովրդի ապրած աղէտներէն վերջինը, բայց չմոռանանք, որ կարող է լինել ճակատագրական մեզ համար:

Վասպ. Հայրենակցական Միութեան վարչութիւնը իւր տրամադրութեան տակ գտնուած փոքրիկ գումարէն 1500 ռուբլի տրամադրած լինելով, որոշած է հանգանակութեան ձեռնարկել, ի նպաստ Հայաստանի և ընդհանրապէս կարօտեալներու օգտին:

Մի խնայէք ձեր կոպէկները, նկատի ունեցէք որ ձեր տուած կոպէկներէն կարող են հազարներ գոյանալ և քանի մը թշուառներու սովէ ազատել: Արդէն շատ աւելի զոհեր տուած ենք, քան որ կարող էր տալ մեզ նման փոքրիկ ազգ մը: Իւրաքանչիւր անհատի կեանքը շատ աւելի թանգ պէտք է գնահատենք, որովհետև մեր անապատացած երկիրը շատ ձեռքերու պէտք ունի: Անենք վերջին ճիգը, թափենք վերջին ջանքը, լսենք մեր հարազատներու ողբը, թեթևացնենք աղէտի ծանրութիւնը և յուսանք որ մօտ է հայ մարտիրոսագրութեան վախճանը:

Շտապենք քանի շուտ է, զոհաբերենք քանի ուշ չէ, զգուշանանք ապագայ սերունդի անէծք ու նախատինքէն:

Վասպ. Հայրենակց. Միութեան Վարչութիւն:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Համաքաղաքացիներ.

Թիֆլիսի քունջ ու պուճախներում, խոնաւ նկուղներում, բաց օթեակ չարդախներում, անդուռ, անպատուհան կացարաններում... ամեն տեսակ սրտամաշ զրկանքներ վայելելուց յետոյ, այսօր այժմ պատրաստւում ենք Հայրենիք վերադառնալու, մեր սեփական օջախների մէջ ապրելու, այնտեղ մեռնելու, մեր նախնիքների մօտ թաղուելու:

Մինչև հիմա Կարս վերադառնալը լոկ յոյսեր էր, բայց այժմ կատարեալ իրականութիւն է: Հէնց որ ճանապարհները բացուեց, արգելքները վերացան՝ մենք բոլորս վերադառնալու ենք Հայրենիք և ծիծեռնակի պէս, ցեխ ու խոտ թափ պիտի անենք, մեր քանդուած բները կարգի պիտի բերենք և ապրենք միասին, մեռնենք միասին: Այս թողնենք: Ես ձեզ հետ ուրիշ խորհրդակցելու կարևոր ասելիքներ ունիմ: Դէ, լաւ լսեցէք, մէկ կարդա ու անցնի, այլ լուրջ ուշադրութիւն դարձրէք իմ ասածներին.

Երբ որ մենք Կարս վերադառնանք, մեզ անշուշտ հարկաւոր կը լինեն առաջնորդողներ, դատաւորներ, կառավարիչներ և զանազան գործավարներ: Ահա այս հարցերն են ուսումնասիրութեան կարօտ, որոնց բարեյաջող լուծումը կախուած է ձեր լուրջ վերաբերմունքից:

Եթէ ձեզ կառավարելու ղեկը կը յանձնէք դարձեալ ինքնակոչ դատաւորներին, ձեր գրպանները շահագործող որկրամոլ շանտաժիստներին, կեղծ ազգասիրութեան ծիրանի հագած կուլակներին, սիրամարգի փետուրներով այլակերպուած գիշատիչ ագռաւներին, գառի մորթու տակ ծածկուած գայլերին, այն ժամանակ դուք կը դառնաք կատարեալ ստրուկներ, կթու կովեր, անբան լծկաններ և ստոր գլխով կը թաղուէք վերջին աղքատութեան մէջ և կապրէք նրանց խիստ հսկողութեան տակ, որպէս գերիներ:

Երևանեան հրապարակում բոլորդ էլ շատ քաջ և ազատախօս էք երևում և վերոյիշեալ մարդկանց պատրաստում էք ձեր ընկերներին, համաքաղաքացիներին: Դուք բոլորդ էլ մարմնացեալ բողոք էք դառել և հազարաւոր օրինակներով հաստատում էք ձեզ կեղեքողների ագահ կաշառակեր վարմունքները: Բայց երբ գալիս է դէմ առ դէմ խօսելու րոպէն, խօսելու, բողոքելու խիզախման օրը, ձեր լեզուն կարճանում է, ձեր բողոքը մեղմանում, ձեր խօսելու տոնը այլ կերպարանք է ստանում: Այսպիսի փոփոխութիւնը անպատուաբեր է, կորովի տղամարդուն վայել չէ: Տղամարդ ես, գլխուդ փափախ կայ, ինչ որ խօսում ես Երևանեան հրապարակում, նոյնը աւելի խիստ կերպով պէտք է կրկնես պաշտօնական ժողովներում:

Եթէ համոզուած էք, որ Կիրակոսը փառասէր է, Մարկոսը կաշառակեր է և այլպիսիները մտնում են ասպարէզ ձեր կաշին մաշկելու, ձեր գրպանը շահագործելու, էլ ինչո՞ւ էք ընտրում: Հայկական առածը ասում է. «Գեղ կանգնի, գերան կը կոտրի»: Եթէ դուք միաբան սիրով միանաք իրար հետ, մի սիրտ, մի հոգի լինէք, միասին կռուէք այդ վարակիչ բացիլների դէմ, այն ժամանակ յաղթանակը ձերն է:

Մի՛ք ձեռքից թողնի ձեր իրաւունքները... մի՛ք թողնի, որ առանց ժողովրդի մասնակցութեան ինքնագլուխ, ինքնակոչ դատաւորներ հրապարակ մտնեն: Պէտք է հասկացնել այդ ինքնակոչ դատաւորներին, որ ոյժը օրէնք չէ. եթէ մարդ են, խիղճ ունեն, թող վերցնեն իրենց կոպալները, թող լեզուի հետ լեզուով խօսեն, գրչի հետ՝ գրչով: Թող, երբ կը մտնենք Կարս, երբ հարկաւոր կը լինի ընտրութիւններ անել, թող կազմեն բազմամարդ ընդհանուր ժողովներ, լիակատար ազատութիւն տան ընտրող հասարակութեան: Թող հեռանան տուփերի մօտից մտրակաւոր գործակալները, թող ժողովուրդը իր կատարեալ համոզմունքով ընտրէ իր համար ղեկավարներ: Այս է պահանջում արդարութիւնը, եթէ ոչ՝ ինչի նման է, եթէ մի անփորձ ուսուցիչ գաւառապետ է դառնում, մի չգիտեմ հայ է, վրացի է, ռուս է, նահանգապետ է դառնում. մի աշխարհից բեխաբար 15 մանէթանոց հասարակ գրագիր քաղաքային ինքնավարութեան մէջ 500 ռ. ռոճիկով առաջնակարգ աթոռների վրայ է բազմում և ժողովրդի գլխին կակալ կոտրում: Ի՞նչ է պատճառը, որ այս միասատար, անփորձ կենդանիները այսպէս ընդարձակ իրաւունքներ են բանեցնում, չաղ ռոճիկներ ստանում և բուրժուայի պէս ապրում: Պատճառը շատ պարզ և կարճ է. որովհետև դրանց ճակատին կպցրած է՝ ոյժը օրէնք է — Ինչպէս որսացին ձեր ձայները: Իհարկէ մտրակով և կոպալով, միևնոյն ժամանակ խոստացան ձեզ բաղնիք — բայց առանց ջրի, ձրի ուսում՝ առանց ուսուցչի, ձրի լուսաւորութիւն՝ առանց լամպերի և առանց կերոսինի, վերջապէս համարեա ձրի՝ չայ, շաքար, հաց և ամէն տեսակ բարիքներ: Այդ բոլորը գրուեցան սառոյցի վրայ, երբ վաստակեցին ժողովրդի ձայները և դառան տէր ու դատաւոր: Ահա այդ ժամանակ դուք ճանաչեցիք դիմակաւոր բարեկամներին, ձեր իրաւունքները շահագործողներին: Դէ, այժմ անցեալի դառնութիւնից խրատ առէք, էլ մի՛ք առատ խոստումների մէջ հաւատա, գիտակցաբար գործեցէք, լաւ ճանաչեցէք ձեր բարեկամներին ու չարակամներին: Դրանք էլ այժմ փախստական են, ապրում են Թիֆլիսում, բայց ապրում են աղաւարի, հագնում են աղաւարի և ամենևին չի երևում, թէ փախստական են: Գրպանները լաւ լիքը լցրին, բեռները բառնեցին և յետոյ հեռացան Կարսից: Սովը, թանգութիւնը, պանդխտութիւնը ոչ մի ազդեցութիւն չի արել դրանց վրայ: Իսկ դուք, հալածուածներ, կողոպտուածներ, թշուառ գաղթականներ, տարագրուած, վտարուած փախստականներ, կորցրէք ձեր սիրելիներին, թաղեցէք ձեր ազիզ բալաներին, կորցրէք ձեր գերդաստանի կէսը, իսկ մնացածներդ էլ յուսահատ դրութեան մէջ սպասում էք արշալոյսի ծագելուն:

Դառնում եմ ձեզ, 4 նոմերանոց դրացիներ. եթէ ուզում էք, որ ձեզ չրամբասեն, չդատապարտեն և ձեր կատարած գործերը ըստ ամենայնի արդար լինեն, մի փոքր հպարտ և ինքնասէր եղէք: Դատաւորների ընտրութեան ժամանակ հեռու կացէք տուփերի մօտից, հեռացրէք նոյնպէս տուփերի մօտից ձեր մտրակաւոր գործակալներին. ազատ իրաւունք տուէք ժողովրդին, որ գիտակցաբար ընտրեն: Ծալեցէք ձեր պատմական մտրակները, մի՛ք շահագործի ժողովրդի իրաւունքները: Ահա այս է պահանջում խիղճը, պարզ արդարութիւնը և կատարեալ մարդկութիւնը: Այսպիսի արդար ճանապարհով եթէ դարձեալ դուք ընտրուէք, այն ժամանակ սրտաբուխ ողջոյնով կը խոնարհենք ձեր առաջ և կը համբուրենք ձեր գործերը:

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

«Էրթօբա» (№ 47) զետեղել է հետևեալ յօդուածը «Հայկական քաղաքականութիւն» վերնագրով:

Ահա այդ յօդուածը.

«Բալկանեան քաղաքականութեան մէկ բնորոշիչ յատկութիւնն էր — իւրատեսակ վիճակագրութիւնը:

Ամէն մի անկիւնի համար Բալկանեան թերակղզու վրայ սերբերը, բուլղարները, յոյները հաստատում էին յամառ կերպով — որ այս ինչ անկիւնը մեր հայրենակիցներով է բնակեցրած և մեզ է պատկանում:

Այս տեսակ քաղաքականութեան մէջ շատ վարժ են և հայ ազգայնականները: Վրացի կուսակցութիւնների ներկայացուցիչները և հայ շովինիստները (ազգայնամոլները) մինչև այսօր գործել են այս հողի վրայ: Եւ անվերջ վէճեր էին ծագում թագաւորների, քարերի, յիշատակագրերի, պատմական իրաւունքների մասին:

Ժամանակակից սոցիալիստները ցանկանում են այս հին վէճին նոր ձև տալ և նոր պատճառաբանութիւններով հին նպատակին հասնել:

Հայկական լրագիրը անգլիերէն լեզուով — այս նպատակին է սկսել ծառայել:

Նա աշխատում է յեղափոխութեան միջոցին պատրաստած վիճակագրութեամբ վերականգնել իր իրաւունքները Թիֆլիս քաղաքի վրայ և էլ աւելի սրել հայ-վրացական յարաբերութիւնները:

Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների առթիւ հայերի անգլիական լրագիրը համեմատում է 1917 թ. վիճակագրական թուերը և վերջին ընտրութիւնների հետևանքները և գալիս է այն եզրակացութեան, որ Վրաստանի կառավարութիւնը արհեստական կերպով է քչացրել հայերի թիւը: Ճիշտ է, շատ քիչ են հայերը քաղաքային ինքնավարութեան մէջ, բայց սրա պատճառը այն է, որ հայ կուսակցութիւնները բոյկոտ յայտարարեցին վերջին ընտրութիւններին:

Երկուսից մէկը: Կամ նրանք ուզում էին իրենց ներկայացուցչութիւնն ունենալ և պիտի մասնակցէին ընտրութիւններին, կամ այս բանը չէին ուզում և այն ժամանակ ամբոխավարութիւնից ձեռք պիտի քաշէին:

Անգլիացիներին այսպիսի կեղծ ծանօթութիւն մատակարարելը, ինչպիսին այն յօդուածումն է, նմանւում է պարզ մատնութեան, որի նպատակն է Վրաստանի անունը կարել երրորդ ուժի առաջ և հաստատել իբրև թէ Թիֆլիսը հայի քաղաք է և ոչ Վրաստանի մայրաքաղաքը, որը միշտ նրան կը պատկանէր:

Զարմանալի չէ, որ հայերը աշխատում են օգտուել ինքնակալութեան վիճակագրութեամբ և քաղաքականութեամբ, որը կայանում էր նրանում, որ Վրաստանից խլուէին այն վայրերը, առանց որոնց նրա պետականութեան վերականգնումն անկարելի կը լինէր, բայց մեզ հետաքրքրում է ոչ թէ այս, այլ այն, որ լրագիրը դիտմամբ ծածկում է փաստերի մի ամբողջ շարքը: Օրինակ՝ այն, որ իրաւասու հայերի թիւը հին ինքնավարութեան մէջ չէր հասնում հայ ընտրողների թուին: Օրինակ՝ հայ էս-էրները ընտրուել էին գլխաւորապէս ռուս զօրքերի կողմից: Միայն եթէ համեմատենք իսկական հայ կուսակցութիւնների և այն կուսակցութիւնների թուերը, որոնք ազդեցութիւն ունեն վրացի և այլ ազգութիւնների մէջ, այն ժամանակ հետևեալը կը ստանանք՝ տուած 92,000 ձայներից հայ կուսակցութիւնները հաւաքեցին ընդամենը 20—22 հազար ձայն, ուրեմն՝ մօտաւորապէս մի քառորդից էլ պակաս:

Չի կարելի ասել, որ ուրիշ կուսակցութիւնների ընտրութիւններում խառն չէին հայ տարրերը, բայց այն էլ պիտի ասել, որ այս մասնակցութիւնը շատ աննշան էր:

Այս ընտրութիւնները բացայայտ կերպով ցոյց տուեցին մի հետաքրքրական երևոյթ: Օրինակի համար այն, որ մինչև անգամ ընտրական ցուցակներով էլ վրացի ընտրողները աւելի դուրս եկան Թիֆլիսում, քան ընդհանրապէս հին վիճակագրութեան համաձայն եղած վրացի բնակիչները: Ռուս կառավարութիւնը համարում էր, որ վրացիները այստեղ թւով 39,000 են: Բայց 1917 թուին ընտրական ցուցակում վրացիք այս թւից շատ աւելի դուրս եկան: Ուրեմն կատարելահասակների թիւը աւելի մեծ էր, քան հին վիճակագրութեամբ կազմուած վրացիների ընդհանուր թիւը: Հին «վիճակագրութեան» այս տեսակ անհաւասարութեան պատճառը մենք գիտենք, բայց նա առ այժմ ուշադրութեան առնելու պէտք չէ:

Նոր ընտրութիւններն էլ, որոնց մէջ ներմուծուած էին 71 հազար բնակիչ, ցոյց են տալիս, որ վրացիների թիւը Թիֆլիսում չափազանց շատացել է:

Ինչ վերաբերում է հայերի թուի քչացման, պէտք է ասել, որ այդ ճիշտ է, բայց այստեղ պէտք է ի նկատի առնել այն, որ հայերի մեծ մասը Հայաստան գնաց, փախստականները ցուցակների մէջ չմտան, միայն տեղացի հայերի թիւը այնքան մեծ չէր, ինչպէս այս կամենում էին այս վիճակագրութեան ժոնգլեօրները (օյինբազները — жоглеры): Բոյկոտն էլ միայն այս թուերը ծածկելու համար յայտարարեցին:

Բայց մենք համոզուած ենք, որ նրանց թունաւոր լեզուն և կեղծ թուերը ոչ մի հետևանք չեն ունենայ, բացի իրենց ամօթ բերելուց»:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏ.

ՕՊԵՐԱ

Արակչիևի օպերայից յետոյ Պետական թատրոնում բեմ դրուեց վրացական երկրորդ ինքնուրոյն օպերան՝ պ. Պալիևի «Աբեսալոմ և Էթերան»:

Պ. Պալիևը, որ վաղուց աշխատում է Թիֆլիսում, յայտնի էր հասարակութեանը իբրև մի կրթուած երաժշտագէտ, բայց նրա երաժշտական երկերի հետ մենք միայն այժմ ենք կարողանում ծանօթանալ: Պ. Պալիևի օպերան մի խոշոր երկ է, բաղկացած 5 գործողութիւնից (6 պատկեր) և չնայած իր թերութիւններին, պէտք է համարուի լուրջ և ուրախալի երևոյթ Վրաստանի երաժշտական կեանքում:

Իմ յօդուածում, որ գրել էի պ. Արակչիևի օպերայի մասին, ես արդէն առիթ ունեցայ շեշտելու, որ ամէն մի օպերայում մեծ նշանակութիւն ունի նաև նրա բովանդակութիւնը: Ուստի, դիմելով նոր օպերայի համառօտ քննութեանը պարտք եմ համարում երկու խօսքով ծանօթացնել ընթերցողին օպերայի բովանդակութեան հետ: Այդ մի առանձին դժուարութիւն չի ներկայացնում:

Վրացական հին աւանդը, որից օգտուել է պ. Միրիանաշվիլին, նոր օպերայի լիբրետոն կազմելիս, պատմում է մեզ, որ վրաց արքայազն Աբեսալոմը (պ. Զալիսկին) սիրահարուել է որբ աղջկայ՝ Էթերայի (տ. Պալիևա) վրայ և ամուսնացել է նրա հետ: Բայց նրանց երջանկութիւնը երկար չի տևել: Էթերայի վրայ սիրահարուել է նաև Վեզիր Մուրմանը (պ. Ինան), որը ծախելով սատանայ Բելիարին (պ. Լորդկիպանիձէ) իր մօր (օր. Մանդինեան) հոգին, սատանայի աջակցութեամբ հիւանդ է դարձնում Էթերային և ըստ Աբեսալոմի առաջարկութեան վերցնում է իր վրայ Էթերային խնամելու պարտաւորութիւնը: Աբեսալոմը, որ շատ տխրում է իր ամուսնու հիւանդութեան պատճառով, գալիս է Էթերայի մօտ և իմանալով, որ Էթերան առողջացել է՝ խնդրում է նրան վերադառնալ իր մօտ: Էթերան մերժում է Աբեսալոմի առաջարկը, իրեն վիրաւորուած զգալով Աբեսալոմի նախորդ վարմունքից: Աբեսալոմը վախճանւում է, իսկ Էթերան, չուզենալով այլ ևս ապրել իր սիրածի մահից յետոյ, դաշունով իրեն սպանում է:

Ահա բոլորը...

Պարզ է, որ այսպիսի մի լիբրետոն, որի մէջ բացակայում է բեմական կեանքը և շարժողութիւնը, շատ անյաջող պէտք է համարուի այնպիսի մի մեծ օպերայի համար, ինչպիսին է յիշեալը: Այդպէս էլ է՝ պ. Պալիևի օպերայի գլխաւոր պակասութիւնն այն է, որ նա շատ երկար է և որ նրա բեմական կազմուածքը ոչ թէ չի աջակցում երաժշտական մասի լաւ տպաւորութեանը, այլ ուղղակի վնասում է նրան. որովհետև 3—4 ժամուայ ընթացքում նոյնը բեմին դրեթէ չտեսնելով բեմի վրայ հետաքրքրական և աշխոյժ կեանք՝ շատ դժուար է և միանգամայն յոգնեցուցիչ:

Հեղինակը, ինչպէս երևում է, ինքն էլ զգացել է օպերայի թոյլ կողմը և երկրորդ ներկայացման համար օպերայի մէջ որոշ կրճատումներ է արել: Բայց այդ քիչ է և օպերայի յաջողութեան համար անհրաժեշտ է անել էլի նոր և խոշոր կրճատումներ:

Գալով նոր օպերայի զուտ երաժշտական կողմին պէտք է նկատել, որ «Աբեսալոմ և Էթերան» գրուած է հին օպերաների ձևով և հարուստ է արիաներով, ամէն տեսակ անսամբլներով և երգեցիկ խմբերով: Օպերայի թոյլ կողմը կազմում են, բացի զանազան կտորների երկարութեան, նաև ռեչիտատիւները, իսկ շատ յաջող են երգեցիկ խմբերը, որոնք գրուած են հմուտ կերպով, լաւ յարմարուած են ձայներին, գեղեցիկ ներդաշնակուած և պահպանում են ժողովրդական երգերի բնոյթը: Կան և գեղեցիկ արիաներ — օրինակ՝ [illegible] — քաջ Մարիխի (պ. Գրանելլի) երգը, [illegible] (4 գործող.) և այլն: Պէտք է առանձնապէս մատնանշել պարերի երաժշտութիւնը՝ լեզգինկան և մանաւանդ ուզունդարան, որի օրկեստրագրումը հիանալի է իր թարմ և անսպասելի էֆֆեկտներով:

Եթէ հեղինակը համաձայնուի անել իր օպերայի մէջ կրճատումներ, այդ օպերան անշուշտ այլ ևս վրաց բեմի ռեպերտուարից չի իջնի: Դերասանները վերաբերուել են պ. Պալիևի օպերային մեծ ուշադրութեամբ և տուեցին ունկնդիրներին բոլորը, ինչ որ կարող էին տալ:

Այդ «բոլորը» կատարելապէս բաւարար էր պ. պ. Զալիսկիի, Ինանի և տ. Գրանելլիի կողմից: Տ. Շուլգինան շատ գեղեցիկ կերպով տանում էր դերի բեմական կողմը, իսկ նրա երգելու մասին ոչինչ չեմ ասի, որովհետև տիկինը իրեն տկար յայտարարեց: Մնացածները աջակցում էին անսամբլին:

Օպերայի երկրորդ ներկայացման պ. Պալիևը տօնում էր և իր գործունէութեան 25-ամեակը:

Մի շարք յարգողներ ջերմ կերպով ողջունեցին յոբելեարին: Ի միջի այլոց թատրոնի կոմիսարը, պ. Ցուցունաւան, յայտարարեց, որ վրաց կառավարութիւնը որոշել է տալ թէ պ. Պալիևին և թէ պ. Արակչիևին տասը-տասը հազար ռուբլի:

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր:

D-moll

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ.

ՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Ստացուած է եղբ. Ջլինգարեանցներից ի յիշատակ իրենց սիրելի մօր. 1,000 ռուբլի:

Նախկին ստացուածների հետ միասին ընդամենը 6,910 ռուբլի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանձին ուշադրութեան նաւակաւորների, կանանց եւ օրիորդների, որոնք փնտռում են մաքուր, ինքնիրենց պաշտօններ

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

հայերէն և ռուսերէն լեզուով (ըստ ցանկութեան) ամենակարճ ժամանակում կարող են սովորել ամենքը, շատ կամ քիչ կարդալ-գրել իմացողները եւ մտնել ծառայութեան հաշուապահի, կոնտորշչիկի, գանձապահի, նամակագրի, գործակալի և այլ պաշտօնով: Կուրսը վերջացնողներին տրւում են ատեստատներ: Պարապմունքները խմբովին և առանձին: Վճարը՝ ով ինչքան կարող է: Ընդունելութիւնը մինչև փետրուարի վերջը ամեն օր առաւ. ժ. 10—12 և երեկ. ժ. 4 7: Դիմել հաշուապահական և առևտրական կուրսեր՝ Մ. Ա. Կիրակոսեանի: Հասցէն՝ Зарядный переул., № 3, За Кононирскимъ переулкомъ, позади главнаго телеграфа, на Головинскомъ проспектѣ. 10—3

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
■ ■ ՁԵՄՍՏԻՈՆ ■ ■
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ:
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 25. 0—23

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան:
Նիկոլայեւսկի № 36:
0—54 Տեսուչ՝ Գ. Կ. Տէր-Դաւթեան

Տպարան «Մամուլ»—կառավ. Մ. Էփրիկեան և Ց. Մայիլեան: Լորիս-Մելիքեան փող., № 22.